**Արձանագրություն N 3**

**ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկածրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

Ք. Երևան

10 դեկտեմբերի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս.Մակարյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ա. Այվազյան |
| | Ա. Ջաքարյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Ա.Հակոբյան |
| | Լ. Գրիգորյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ.Կարապետյան |

**1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**
**(Ս.Մակարյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին,

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**2. <u>Բանակցությունների կազմակերպման մասին</u>**
**(Ս.Մակարյան)**

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժնի համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել 2019 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 12:00-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**3. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**
**(Ս.Մակարյան)**

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից գնահատող հանձնաժողովը որոշեց նիստ հրավիրել ս.թ դեկտեմբերի 13-ին ժամը 15:00-ին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ս.Մակարյան |
| բացող անդամներ՝ | Ա.Այվազյան |
| | Ա.Ջաքարյան |
| գնահատող անդամներ՝ | Ա.Հակոբյան |
| | Լ. Գրիգորյան |
| քարտուղար՝ | Գ.Կարապետյան |